ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի օգոստոսի 14-ին կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 գնման պայմանագրում 2022 թվականի մարտի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 17.02.2022թ N200-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 պայմանագրով նախատեսված մնացորդային աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանվել է 30.08.2022թ. ներառյալ:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.4 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 15

14.08.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 գնման պայմանագրի

ք. Երևան 30.03 2022թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ. Մնացականյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 200-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետը և ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 14.08.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Ուժը կորցրած ճանաչել 18.03.2022թ. կնքված N 14 համաձայնագրի N 2 հավելվածը:

1.1.2 Պայմանագրով նախատեսված մնացորդային աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանել 31.08.2022թ. ներառյալ:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ք. Գավառ, Անդրանիկի 5
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150014871111107
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 08404037
Հ/Հ 900011012599	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Ա. Մկրտչյան	---------- Հ. Մնացականյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.